

Մարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ, Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՇԻՐԱԿՈՒՄ ԵՎ ՎԱՆԱՆՆԻՆԻՍ ՕԶԻ ԵՎ ՕԶԱՄԱՆՈՒԿԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՇՈՒՐՁ*

Հնադարյան Շիրակն ու Վանանդն ընդգրկած Էթիունի երկրի բնակչության հնդեվրոպական ծագումն հաստատող պատմական ու լեզվաբանական բնույթի փաստերին¹ այժմ գումարվում են հնագիտության մատուցած տվյալները²: Այդպիսի եզրակացությունը հաստատվում է նաև էթիունյան տարածքների բնակչության հնագույն և հնադարից եկող պաշտամունքների միջոցով³: Այդ նույնը հաստատելու են գալիս նաև Ախուրյանի ավազանի բնակչության օձապաշտության արգասիք ներքոբերյալ նյութն ու նրա վերլուծությունը:

Մ. Աբեղյանը հայոց օձապաշտությունն ուսումնասիրելիս նախ և առաջ ուշադրություն դարձրեց այն հանգամանքի վրա, որ օձերը տարբեր են ըմբռնվել՝ չար և բարի: Այս վերջինները, սովորաբար, ոչ թունավոր օձերն են՝ լորտունները, որոնք նույնիսկ հայի համարում են ունեցել⁴: Այս հանգամանքը նշանավոր հայագետին մղել է եզրակացնելու, որ «Ոչ թունավոր օձերի «հայ» անվանումը, որ մերթ իբրև օձ է հանդես գալիս, մերթ իբրև մարդ, և գավառի նախնիների նման պաշտպանում է գավառն ու բոլոր հայերին, ծագել է անշուշտ այն հանգամանքից, որ օձերը հնում որպես նախնիներ են ընկալվել»⁵: Հայոց առասպելաբանական պատկերացումներում օձերի նախնիներ համարվելու հետևանքով և օձերի՝ իրենց խորիքը փոխելու պատճառով է երևան եկել օձամանուկների առասպելական կեր-

* Հոդվածն իբրև զեկուցում ներկայացվել է Գյումրիում 2016թ. սեպտեմբերի 24-25-ին կայացած «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային 9-րդ գիտաժողովում:

¹ Կարագեոզեան Յ., Մեկագիր տեղանուններ (Այրարատում և հարակից նահանգներում), «Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում», հ. I, գիրք 1, Եր., 1988, էջ 175-176:

² Նույն տեղում, էջ 176, որտեղ վկայակոչված են Լոռի բերդի և Քարաշամբի պեղումների տվյալները: Դրանցից բխող եզրակացությունը հաստատվում է Արագածոտնի մարզի Վերին և Ներքին նավեր հնավայրերի պեղումների տվյալների միջոցով (տե՛ս Միմոնյան Հ., «Հայկ և Բել», առասպել, ա՛նք, թե՛ իրապատում, Հայկագունիներ. նվիրվում է Հայոց ձորի ճակատամարտի 4500-ամյակին, Եր., 2013, էջ 105):

³ Շիրակի, Վանանդի և ամբողջ Էթիունի բնակչության հնդեվրոպական և մասնավորապես հնդեվրոպական-հայկական ծագում ունենալու, հայախոս լինելու և հնդեվրոպական հետավոր անցյալից եկող շատ պաշտամունքներ ունենալու իրողությունը ցույց է տրվել մեր հրապարակած բազմաթիվ հոդվածների և Մ. Պետրոսյանի «Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում» մենագրության մեջ (Եր., 2006, էջ 208-213, 247-272, 280-316): Տե՛ս նաև Պետրոսյան Լ., Արևի և լուսնի պաշտամունքի արտացոլումները Վանանդում, ԳՊՄԻ հանրապետական նստաշրջանի զեկուցումների հիմնադրույթներ (Քրիստոնեության 1700-ամյակին նվիրված), Եր., 2001, էջ 31, Պետրոսյան Մ., Պետրոսյան Լ., Մեկագրային Durubani/հայերեն տորբան, ՎՊՄԻ հանրապետական գիտաժողովի նյութեր, Վանաձոր, 2009, էջ 65-69:

⁴ Լալայան Ե., Երկեր, հ. II, Եր., 1988, էջ 170-171: Աբեղյան Մ., Երկեր, հ. VII, Եր., 1975, էջ 64-65:

⁵ Աբեղյան Մ., նշվ. աշխ., էջ 65:

պարը՝ որպես «օձի խորիսի մեջ մտած երիտասարդ»⁶: Շիրակյան հեքիաթներից մեկում դեռևս օձակերպ այդպիսի մեկը պատկերվում է թագավորի դստեր հետ: Հարսանիքից հետո «Էս մեր օձը, մեկ էլ բիրդան բիրա շապիկը հանեց ու էնպես աննման ջահել տղա դարձավ, օր թագավորի աղջկա խելքը գնաց: Աղջի՛, ըսավ, գիտե՞ս, էս օձ չեմ, էս թագավորի տղա եմ»⁷:

Այս օձամանուկի կերպարի ամբողջական բացահայտման գործում կարևորվում է նաև սրա *Համբանի* անունը: Մեր կարծիքով, այս անվան նախաձևը եղել է **Համբար-մանի*՝ հետագայում *-մ*-ի անկումով (հմմտ. անձնանուններից՝ *Շամբիթ>Շաբիթ*, տեղանուններից՝ *Համբանդ>Համբանդ*) և *-ար*-ի օրինաչափ հնչյունափոխությամբ: Օձամանուկի *Համբանի* անվան *-մանի* բաղադրիչի արմատ *ման*-ը նշանակում է «պտույտ, շրջան, ոլորք, գալար» և առկա է նաև *մանիճ* «գալարք օձի» բառում⁸ (վերջածանցի համար հմմտ. *լուիճ, կաիճ, կտրիճ, ուտիճ* և այլն): Նույն արմատն է պարունակում նաև Բարձր Հայքի *Մանի* լեռնանունը: Թեպետև ավելի ուշ սա բխեցրել են քրիստոնյա քարոզիչ Մանի կնոջ անունից⁹, բայց լեռան պաշտամունքին ձևաված հայոց հին տոմարի 16-րդ օրվա *Մանի* անունը խոսում է լեռնանվան շատ ավելի հին լինելու մասին: Մանի լեռն անձավաշատ վայր էր, ուստի, կարծում ենք, թե իր անունը լեռանը և նրա քարանձավներին (Մանեայ այրք) տված Մանին նախապես օձ և օձամարդ է ըմբռնվել: Հիմնավորենք. 1. Օձի անվան վրա դրված թաբուի պատճառով¹⁰ օձը նաև **մանի* (<*ման-ի), այսինքն՝ «գալարվող» է կոչվել այնպես, ինչպես օձի գալարքն էր կոչվում *մանիճ*: 2. Հայաստանում եղել են և կան «օձասար» նշանակող բազմաթիվ լեռնանուններ: 3. Քարանձավները նաև օձերի բնակության վայր էին համարվում: *Մանի* լեռնանվան և օձամանուկի *Համբանի* անվան *-մանի* բաղադրիչի մեջ *-ի*-ն կամ կենդանիների անուններում պատահող վերջածանց է (հմմտ. *արծուի, արտի* «վայրի մաքի», *մոզի, որի* «ագռավի մի տեսակ է», *նզնի, ջորի*) կամ Հայկական լեռնաշխարհի տարբեր դարաշրջաններից հայտնի տեղանուններում ևս առկա *-ի* տեղանվանակերտ վերջածանցը՝ *Մանի* լեռնանվան դեպքում (հմմտ. *Այլի, Լոռի, Կոթի, Կարբի, Կունայրի, Ուշի*):

Այս օձամանուկի անվան *համբար*- բաղադրիչը գրաբարյան ձևն է *ամբար* «շտեմարան, մթերք, մթերած բաները» բառի, որից ունենք *համբարել, համբարանոց, համբարածու* «պարենավաճառ»¹¹ բառերը: Անունն ամբողջությամբ նշանակել է «ամբարի օձ», այսինքն՝ «ամբարի (բնակիչ) օձ», նաև՝ «ամբարի (պահապան) օձ»:

⁶ Մալխասյանց Ստ., *Հայերեն բացատրական բառարան*, հ. IV, Եր., 1945, էջ 607: *Օձամանուկների մասին տե՛ս նաև Հայ ժողովրդական հեքիաթներ*, հ. I, Եր., 1959, էջ 236-240, հ. III, Եր., 1962, էջ 175-181, հ. VI, Եր., 1973, էջ 77-80, 145-146, հ. IX, Եր., 1968, էջ 231-237:

⁷ *Հայ ժողովրդական հեքիաթներ*, հ. IV, Եր., 1963, էջ 19:

⁸ Աճառյան Հ., *Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ)*, հ. III, Եր., 1977, էջ 249: *Հմմտ. Բառգիրք հայոց, Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Ամալյանի (այսուհետև՝ Բառգիրք հայոց), Եր., 1975, էջ 207-208:*

⁹ Մովսիսի Խորենացույ Պատմություն Հայոց, Եր., 1981, գիրք Բ, գլ. դա:

¹⁰ ՀԱԲ, հ., IV, Եր., 1979, էջ 611-612:

¹¹ ՀԱԲ, հ., I, Եր., 1971, էջ 148-149:

Այս անվան տարբերակին հանդիպում ենք հայ ժողովրդական երգերից մեկում (գրառումը՝ Կոմիտասի) *Հաբրբրան* տեսքով՝ որպես իգական անձնանուն¹²: *Հաբրբրան* < **հաբրբրան* / **հաբրբան*՝ *բ-բ* < *բ-մ* առնամանությամբ և գաղտնավանկ *ը* ձայնավորի պահպանումով: *Հաբրբանի* անվան «ամբարի օձ» ստուգաբանությունը Շիրակի առնչությամբ տեղին է, որովհետև հնուց ի վեր պատմական Շիրակը հայտնի էր իր հացահատիկի ամբարներով¹³: Հողագործության առաջացման ու զարգացմանը զուգընթաց ձևավորվում էր ցամաքային օձերի պաշտամունքը: Հացահատիկի գող մկների և մյուս կրծողների բնական թշնամին՝ օձը, դարձել էր հողագործ, հացահատիկ մշակող մարդու բարեկամն ու դաշնակիցը: Պաշտելի, սրբազան օձի պատկերներն առկա են արդեն մ.թ.ա. VI-IV հազարամյակների Առաջավոր Աիայի և Հարավարևելյան Եվրոպայի հողագործական մշակույթներին բնորոշ պաշտամունքային ամանեղենի և գունավոր խեցեղենի վրա¹⁴:

Հայաստանի հնագիտական և ազգագրական նյութերը ևս վկայում են օձի պաշտամունքի՝ հացահատիկների հետ ունեցած սերտ կապի մասին: Օձի պատկերը որպես հացահատիկի պահապան զարդարում է Կարմիր բլուրի արտակարգ մեծ կարասի ուսերը¹⁵, իսկ Դվինի հնավայրի ոչ միայն կարասները, այլ նաև զոհասեղանների սալերն ունեն սրբազան օձերի բարձրաքանդակներ¹⁶: Օձերի պաշտամունքը Հայաստանում շարունակվել է հաջորդ հազարամյակներում ևս՝ ընդհուպ XIX դ. վերջ և XX դ. սկիզբ: Գ. Սրվանձտյանցի վկայությամբ. «Օձեր ալ կան, որ Սշո աշխարհի պահապաններն են և գյուղացվոց վնաս չեն տար: Տեսակ մը օձերու համար էլ կպատմեն, թե տները և *ջաղացները* (ընդգծումը մերն է-Ս.Պ., Լ.Պ.) կը բնակին, և իրենց բնակած տան բախտը անոնցմով կը հաջողի եղեր»¹⁷: Շիրակի և Սշո դաշտի նման հացառատ Բասենում ևս վերաբերմունքն օձերի նկատմամբ նույնպիսին է եղել: Ականատես բասենցու վկայությամբ. «Շատերի տներում օձ կար: Սրանք սովորել էին մարդկանց և չէին խայթում: Բասենում օձը համարվում էր տան դովլաթ (բախտ, հարստություն) և դրա համար էլ տնային օձերին ձեռք չէին տալիս»¹⁸:

Պաշտելի օձերի առթիվ Մ. Արեղյանը նկատել էր տալիս, որ Հայաստանում «Ամեն գավառ ունի իր օձերը, որոնք *քարանձավներում* (ընդգծումը մերն է - Ս.Պ., Լ.Պ.) են բնակվում»¹⁹: Այս հանգամանքը ամրապնդելով *Մանի* (որից՝ *Մանեայ այրք*) և *Հաբրբանի* անունների մեր ստուգաբանությունները, նաև բանալի են դառնում *անձաւ* բառի ստուգաբանության համար: Թաբուի պատճառով «օձ» նշանակող *հ.-ե. *anguh-* բառը վերածվելով **ang'hi-*ի, հայերենում տվել էր նախ՝ **անձ*,

¹² Երզարան, կազմեց Վ. Սամվելյան, Եր., 1949, էջ 164:

¹³ Խորենացի, *Ս, ժբ*:

¹⁴ Иванов В., Змей, Мифы народов мира. I, М., 1987, стр. 468-469.

¹⁵ Մեծամոր (ուսումնասիրություն 1965-1966թթ. պեղումների տվյալներով), Եր., 1973, էջ 126:

¹⁶ Նույնը:

¹⁷ Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. I, Եր., 1978, էջ 48:

¹⁸ Հակոբյան Գ., Ներքին Բասենի ազգագրությունն ու բանահյուսությունը, Եր., 1974, էջ 272-273:

¹⁹ Արեղյան Մ., նշվ. աշխ., հ. VII, էջ 65:

ապա, նոր շեղումով՝ *աւձ*, որից էլ՝ *օձ*²⁰: Մրանցից **անձ*-ը պահպանած *անձաւ* «այր, քարայր», «որջ կամ բույն»²¹ բառը հավաստի ստուգաբանություն չի ունեցել: Մեր կարծիքով, *անձաւ* < **անձ-աւ*, որում **անձ*-ը «օձ» է նշանակում, իսկ **աւ*-ը «օթևան» < հ.-ե. **au-* «զիշերել»: Վերջինից ունենք *ագանիմ* «զիշերը մի տեղ անցկացնել, օթևանել» և *օթեւան* < **աւթեւան*²²: Նույն **աւ*-ը իր գուգահեռն ունի հին հունարենում. հմմտ. *αἴλις* «ապաստարան, զիշերային օթևան, վրան, ախոռ», *ἔνισθμος* «իջևան, բնակարան», *ἰαυθμός* «զիշերային ապաստարան, որջ»²³: Հայերեն *աւ*-ը որպէս տեղանվանակերտ վերջածանց է հանդես գալիս հին Հայաստանի մի շարք տեղանուններում: Դրանցից են *Կճաւ*, *Չիրաւ*, *Որդնաւ/Վարդնաւ*, *Պարտաւ*, *Ցուրտաւ*: Արևմտյան Շիրակի Բաշ-Շորագյալ (հնում՝ Շիրակաւան) գյուղից հյուսիս գտնվող Բանձրեղի սարահարթի համար տեղացիները պատմում էին, որ սրա «քարայրները եղել են շատակեր Շարայի ամբարները, որն ապրել է Ղարսաչայի և Արփաչայի (ներկայիս՝ Ախուրյանը – Ս.Պ., Լ.Պ.) միջև ընկած բարեբեր հարթության վրա»²⁴: Հիշատակված «Շարայի ամբարները» հայտնի էին նաև Մովսէս Խորենացուն, որը Շարայի շատակերությունն առնչելով դրանց, բերում է հետևյալ առածը. «Թէ քո Շարայի որկորն է, ասեն, մեր Շիրակայ ամբարքն չեն»²⁵:

Այս ամբարները հայտնի էին դեռևս Ուրարտուի Սարգուրի II (մ.թ.ա. 764-735թթ.) թագավորին²⁶: Էրիախի երկրի (հետագա Շիրակում) դեմ նրա ձեռնարկած արշավանքներից մեկն ուղեկցվել էր «150 *muri*-ների» կողոպուտով²⁷: Ուրարտ. սեպագր. *muri* բառը հայերեն *մորի*-ն է, որը քանիցս հիշատակված է միջնադարյան «Բառգիրք հայոց»-ում («Երեմիա Մեղրեցու բառարան»): Այստեղ կարդում ենք. «*Մորի*-անձավ, կամ որջ, կամ կաղաղ, կամ դադար, կամ բոյն, կամ պտուղ մորենույ»²⁸ (վերջին բացատրությունը վերաբերում է հանրահայտ հաստապտղին): Եվս չորս անգամ բառն հիշատակված է *մորի*, *մոռի*, *ամուրի* (նախահավելվածական *աւ*- ձայնավորով) տարբերակներով. 1. «*Մորի* - ամուրի»²⁹, որից՝ 2. «Մոռիս. ամուրք»³⁰, 3. *կաղաղ* բառի բացատրության մեջ. «Կաղաղ- որջ, կամ բոյն, կամ ծածկոյթ, կամ մորի, կամ խաղաղ»³¹ (վերջինս *կաղաղ*-ի հնչյունական տարբերակն է), 4. *սաղակիմ* բառի բացատրության մեջ. «*Սաղակիմ* – մորի, կամ որջ առիւծոյ»³²: «Աստվածաշնչում» առկա *մորի* բառը «Նոր հայկազյան բառարան»-ի հեղինակներ-

²⁰ ՀԱԲ, հ. IV, էջ 612:

²¹ ՀԱԲ, հ. I, էջ 202, «Բառգիրք հայոց», էջ 22:

²² ՀԱԲ, հ. I, էջ 76, հ. IV, էջ 609-610.:

²³ ՀԱԲ, հ. I, էջ 76:

²⁴ Ղանալանյան Ա., *Ավանդապատում*, Եր., 1969, էջ 39:

²⁵ Խորենացի, Ա, Ժբ:

²⁶ Պետրոսյան Ա., «Շիրակայ ամբարք»-ի շուրջ, *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1982, թիվ 8, էջ 73-74:

²⁷ Меликишвили Г., *Урартские клинообразные надписи (այսուհետև՝ ՄԿԿ)*, Մ., 1960, надп. N155.

²⁸ Բառգիրք հայոց, էջ 220:

²⁹ Նույն տեղում, էջ 219:

³⁰ Նույն տեղում, էջ 219-ի ծան. 410:

³¹ Նույն տեղում, էջ 155:

³² Նույն տեղում, էջ 282:

րը բացատրում են հետևյալ կերպ. «որք զագանաց ի մէջ մայրեաց, ուր են կորիւնք ընդ մօրն. Կաղաղ, խշտի, դաղաք, մօրի, մօրնի...»³³:

Իրենց հաղթական արշավանքները նկարագրող արձանագրություններում ուրարտական թագավորները կողոպտված հացահատիկի շտեմարանների մասին հիշատակում են ո՛չ միայն Էրիախիի (Շիրակում) առնչությամբ: Արգիշտի I-ը (մ.թ.ա. 786-764թթ.) Սարիդամիշի արձանագրության մեջ պատմելով ¹Aštuhiniei KUR-ni//«Աստուխական (ցեղի) երկրի» նվաճման և ^{URU}Ahuriani//«Ախուրեան (քաղաքի)» գրավման մասին, հիշատակում է նաև ձեռք բերված հացահատիկի պաշարը³⁴: Aštuhie- ցեղի երկիրը տեղադրվում է հետագա Վանանդի հարավ-արևմուտքում, հին Ախուրեան գետի (Կարսագետ) վերնագավառում, Կարս քաղաքից հարավ-արևմուտք՝ ներառյալ արձանագրության գտնված վայրը, այժմյան Սարիդամիշ բնակավայրի շրջանը³⁵: Սրանում հացահատիկի առատության փաստը թույլ է տալիս այս հենքի վրա ստուգաբանել նրա բնակիչների անունը. հմմտ. *աշարա/աշորա* և *Սշարունիք/Սշորնիք*, նաև՝ *աշարա/շարա* և *Շարայի ծնունդը/Շարաբա*³⁶:

Գր. Ղափանցյանը քննարկվող ցեղանուն-երկրանունը համադրում էր ուրարտ. սեպագր. Aštui- «հա՛ց» և հայ. *աստուճ/աշտուճ* «ցամաք հաց, չոր հաց» բառերին՝ ցույց տալով, որ վերջինում *-ուճ*-ը վերջածանց է. հմմտ. *բրդուճ, դառնուճ, կճուճ, պարկուճ* և այլն³⁷: Ըստ Հ. Աճառյանի՝ *աշտուճ*-ը հետին ձև է՝ առաջացած *աստուճ*-ից (*u-ճ* շ-ճ մասնակի առնմանություն), որը հավաստի ստուգաբանության չարժանացած բառ է³⁸: Մեր կարծիքով, սրա **աստ*- արմատի **հաստ*- տարբերակն է առկա *հաստեայ* (<հաստ-եայ) «խմորեղեն» բառում, որից «*Հաստեայ*-բարակ հաց, կամ լօշ»³⁹: Թեև այս արմատի և հուն. *ճ* «ցորեն» բառի նմանությունը պատահական է համարվում⁴⁰, բայց կարծում ենք, թե սրանց հիմքում հ.ե. *ak՝ «սուր լինել» արմատն է: Այս վերջինից ծագած բառերից են հայ. **ասեղ* (*<աս-եղ), հուն. *ճ* «ծայր, սայր», *ճ* «ուր ծայր, խթան», հուն.-պելասգ. *ճ* «քիստ (հասկի)», հրգ. *ahir*, գոթ. *ahs*, գերմ. *ähre* «հասկ», անգլ. *ear* «հասկ կապել»⁴¹: Գերմանական լեզուների բառերը հուշում են, որ հասկն այդ արմատով է նշվել ասեղի նման սուր ծայրեր՝ քիստեր ունենալու պատճառով: Ըստ երևույթին, հավաստի ստուգաբանություններ չունեցող *հասկ*⁴² և *հաստեայ*⁴³ բառերը ծագում են նույն *ak՝ արմատից՝ *h* նախահավելվածականով, մի դեպքում *-կ*, մյուսում՝ *-տ*

³³ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. II, Եր., 1981, էջ 298:

³⁴ УКН, N 130; Арутюнян Н., Топонимика Урарту. «Хурриты и урарты», I, Ер., 1985, стр. 49.

³⁵ Арутюнян Н., Земледелие и скотоводство Урарту, Ер., 1964, стр. 74-75.

³⁶ Պետրոսյան Ս., Հացագգիների մշակության և պաշտամունքի արտացոլումը Շարայի ավանդազրույցում, Պատմա-բանասիրական հանդես, 1981, թիվ 3, էջ 190, ծան. 23:

³⁷ Ղափանցյան Գ., Հայոց լեզվի պատմություն (հին շրջան), Եր., 1961, էջ 214:

³⁸ ՀԱԲ, հ. I, էջ 222:

³⁹ ՀԱԲ, հ. III, էջ 50: Բառգիրք հայոց, էջ 181:

⁴⁰ ՀԱԲ, հ. III, էջ 50:

⁴¹ ՀԱԲ, հ. I, էջ 268: Ջահուկյան Գ., Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Եր., 1970, էջ 91:

⁴² ՀԱԲ, հ. III, էջ 48:

⁴³ ՀԱԲ, հ. III, էջ 50:

աճականով: Անկասկած, *Aštuhini* < *Ast-uh- ցեղանուն-երկրանվան մեջ *ast- (<h.-ե. *ak'-d-) հիմքին ավելացված է -uh- վերջածանցը, առկա նաև *ածուխ* (<*արծ-ուխ. հմմտ. *արծենել*, *արծարծել*), *անանուխ* (<*ա-նան-ուխ. հմմտ. *նանու*), *արմ-ուխ* (<*արմ-ուխ. հմմտ. *արմանայ*, *զ-արմանայ*), *զլուխ* (<*զիլ-ուխ. հմմտ. *զիլ*, *զլ-որ*)⁴⁴: Ըստ երևույթին, *Aštuh*- ցեղանունը Ախուրյանի (հին առումով) վերին հոսանքի բնակիչները կրել են հացահատիկի մշակությամբ զբաղվելու պատճառով:

Որտեղ կար հացահատիկի մշակություն և առատություն, այնտեղ էլ բազմանալու էին հացահատիկի գող մկները և նման մյուսները: Ուրեմն, այնտեղ էին լինելու նաև սրանց թշնամի և հացահատիկ մշակող մարդկանց բարեկամ օձերը: Հիշենք, որ հարավ-արևմուտքից Վանանդին հարևան էր Բասենը՝ հացահատիկի մշակության և օձապաշտության հայտնի կենտրոններից մեկը, իսկ Վանանդը անգամ Բասենի մասն է համարվել և կրել է նրա անունը, կոչվելով *Անիայտ եւ Վերին Բասեան*⁴⁵: Մովսես Խորենացիի Վանանդի տեղորոշումը և բնութագիրը տալիս է հետևյալ կերպ. «մերձ ի սահմանն Շարայի» և «ի ներքոյ Կողայ՝ յարգաւանդաւհող եւ ի հացաւէտ տեղիս»⁴⁶: Եթե Շիրակում և Վանանդում կային հացահատիկ մշակողներին և իրենց երկրներին տրված մեծ վաղեմության անուններ⁴⁷, ուրեմն կարող էին լինել նաև օձապաշտության արգասիք տեղանուններ: Մինչև դրանց անդրադառնալը նշենք, որ թաբուի պատճառով օձին տվել էին նաև «հողային, ընդերքային» իմաստներով անուններ և որ վաղ նախնադարից սկսած՝ գոյություն ունեւ կոսմոգոնիկ և էմբրիոգոնիկ երևույթների առասպելաբանական նույնացումը⁴⁸: Ընդ որում, կենդանու կամ մարդու մարմնի մասերը համադրվում էին տիեզերքի մասերին՝ մասնավորապես ներքին օրգանները՝ ընդերքի, իսկ մարմնի ներքին (ստորին) մասը՝ երկրի:

Մեր ուշադրության առարկան միջնադարյան «Բառգիրք հայոց»-ից հայտնի «Արգաղայ-օձ»⁴⁹ բառն է, որի առաջին բաղադրիչը նույնն է Արևմտյան Շիրակի *Արգինա* տեղանվան առաջին բաղադրիչի և *արգ- «վոր» արմատի (<h.-ե. *arq-, հմմտ. *արգանդ*, *արգահատել*⁵⁰) հետ: *Արգաղայ* բառում առկա են *արգ-աղ-այ* բաղադրիչները, որոնցից -աղ-ի համար հմմտ. *կախ-աղ-ան*, *կենց-աղ*, *յապ-աղ-ել*⁵¹, իսկ -այ վերջածանցի համար՝ *ափափ-այ*, *բոր-այ*, *կր-այ*, *պախր-այ* և այլն: *Արգինա* <*արգ-ին-այ, որի -ին- վերջածանցի համար հմմտ. *ամուս-ին*, *դարբ-ին*, *Լուս-ին*, *կարգ-ին* և այլն: *Արգաղայ* բառի արմատակիցն ու իմաստակիցն ենք համար

⁴⁴ ՀԱԲ, հ. I, էջ 102-103, 180, 329, 565:

⁴⁵ Խորենացի, Բ, է:

⁴⁶ Խորենացի, Բ, թ:

⁴⁷ Պետրոսյան Ս., Հացագգիների մշակության և պաշտամունքի արտացոլումը Շարայի ավանդազրույցում, էջ 187-204:

⁴⁸ Гамкрелидзе Т., Иванов В., Индоевропейский язык и индоевропейцы, т. I-II, Тб., 1984, т. II, стр. 526-527, 821; Stricker B. H., De Geborte van Horus, Leiden, 1968, S. 139, 155.

⁴⁹ «Բառգիրք հայոց», էջ 36:

⁵⁰ «Մոր որովայնը, զավակատունը» նշանակող արգ-անդ բառը կազմված է -անդ վերջածանցով. հմմտ. արանդ «կոճղեզ» (<h.-ե. *ʔ «աճել»), եռանդ, լաւանդ (<լաւ), հիւանդ (հմմտ. հեւ «հեւալը»), իսկ արգահատել <*արգ+հատ, որում հատ «կտրելը» (ՀԱԲ, հ. I, էջ 302-303):

⁵¹ ՀԱԲ, հ. II, Եր., 1973, էջ 565:

րում հուն. *ձրյհի* «օձի տեսակ» բառը, որը նաև Դեմոսթենեսի հեզնական մակա- նունն էր⁵² (հմմտ. վիշապագուն Արգավանի *Արգ-աւ-ան* անունը Մովսես Խորենա- ցու երկում): Ի նկատի առնելով թաբուի պատճառով օձին տրված «հողային» և «ըն- դերքային» անվանումների գոյությունը՝ կարելի է *արգաղայ* և *ձրյհի* բառերին առնչել նաև նույն **արգ-* արմատը պարունակող «*Արգասի - երկիր*» և *արգասանդ* «բերրի, պտղաբեր» բառերը, հմմտ. «Արգասանդ- բերող, կամ պարարտ, կամ հիւթեղ, կամ կակուղ»⁵³ (երկրորդ բառին տրված բացատրություններն առավելա- պես հողին են վերաբերում): *Արգինա* < **Արգինայ* տեղանվան մեջ անշեշտ -ի ձայ- նավորի պահպանված լինելու փաստը պետք է բացատրել նրանով, որ սա եղել է պաշտամունքային ոլորտի տեղանուն թե՛ նախաքրիստոնեական, թե՛ հետագա դարերում, իսկ այդպիսիները (հմմտ. *Էջմիածին*-ում նախաձայն *է-*ի պահպանու- մը) հաճախ չէին ենթարկվում լեզվում ընթացող օրինաչափ փոփոխություններին: Նույնպիսի իրավիճակ է գրանցված ուրիշ երկրների տեղանունների դեպքում ևս, որոնք նույնիսկ բառապաշարի առանձին շերտ են համարվում⁵⁴:

Իսկ ի՞նչ ուղղակի վկայություն ունենք Վանանդում օձի պաշտամունքի մասին: Դիմենք Վանանդի կենտրոնատեղի Կարսի բնակիչ Եղիշե Չարենցին: Նա իր «Երկիր Նաիրի» արձակ երկում բերում է կարսեցիների հավատալիքների առանձին պատասխաններ: Դրանցից մեկի համաձայն, *Վարդանի կամուրջ* կոչված և Ախուրյան-Կարսագետի մեջ ցցված ժայռի տակ վիհեր էին, իսկ այդ «վիհերում, որոնց մեջ ջուրն անգամ վարանում էր լցվել, ապրում են ջրային գազաններ, պա- ռավներ, մարդագլուխ գոմեշներ, ջրային հսկա մի օձ, որ կամրջի «տերն» է՝ կամրջի բարի ոգին, և երկու ջրահարս»⁵⁵, իսկ գիշերային ժամերին ժայռեղեն բարձունքից դիտողին թվում էր, թե «հորդ հեղեղուկ խավարում շողշողում է վարը, ծփում է պսպղուն օձը՝ կամրջի բարի ոգին»⁵⁶: Ախուրյան-Կարսագետի ջրա- յին վիհում բնակված այս հսկա օձը՝ բարի ոգին, հիշեցնում է հին հնդիկների վե- դայական առասպելաբանության Ահի-բուդհիային, որի անունը «անդունդի օձ» է նշանակում, բայց նրա շրջապատը կազմող գլխավոր կերպարներից են ոչ միայն Ապամ-Նապատը («ջրերի գավակը»), այլև կայծակեղեն Աջա-Էկապաղը («միտա- նի այծը») և արևաբնույթ Սավիտար աստվածությունը⁵⁷: Ապամ-Նապատը նաև հին իրանցիների պաշտելի աստվածություններից էր, գալիս էր ընդհանուր հնդի- րանական անցյալից⁵⁸, բայց ավելի խոր հնդեվրոպական արմատներ ուներ, որով- հետև դրանց գուգահեռն էր հայ հնագույն առասպելաբանության **Ախուրը* (սրա

⁵² *Древнегреческо-русский словарь, составил И.Х. Дворецкий, т. I-II, М. 1958, т. I, стр. 229.*

⁵³ *Բարգիթը հայոց, էջ 36:*

⁵⁴ *Томахин Г., Топонимы как реалии языка и культуры (на материале географических названий США), "Вопросы языкознания", М., 1984, №4, стр. 87.*

⁵⁵ *Չարենց Ե., Երկեր, Եր., 1955, էջ 301:*

⁵⁶ *Նույն տեղում, էջ 304:*

⁵⁷ *Топоров В., Ажда Экапад, Мифология. Золотой фонд. Энциклопедия (այսուհետև՝ ՄՅՓՁ), стр. 21; Նույնի, Ахи Будхня, МՅՓՁ, стр. 75.*

⁵⁸ *Նույնի, Адам Напат, МՅՓՁ, стр. 51; Брагинский И., Адам Напат, նույն տեղում, էջ 51:*

անունը նշանակում է **ախ-ուր*՝ «ջր-որդի»), որն իր անունն էր սովել *Ախուրեան* գետին և *Ahuriani* քաղաքին⁵⁹:

Վարդանի կամրջի անվանադիրը լինելու էր նրա վիճում բնակված կամրջի «տերը և բարի ոգին»՝ հսկա օձը: Սրա *Վարդան* անունը, նույնահունչ լինելուց բացի, ոչինչ ընդհանուր չունի *Վարդան* արական անձնանվան հետ: Նրա անվան հիմքում դրավոնության ենթարկված **վադր* «ջուր» բառն է՝ *-ան* վերջածանցի հավելումով⁶⁰: Հնդեվրոպական ծագումով այս բառն է Գր. Ղափանցյանը տեսնում *Վարդավառ* (<*վադր-ա-վառ) ջրատունի անվան մեջ⁶¹: Այս նույն **վադր*>**վարդ* արմատն է առկա նաև *Վարդամարգ* (<*վադր-ա-մարգ) գետանվան, *Նուարդ* (<*Նու «հարս+վադր» «ջուր») դիցանվան, առասպելաբանական *Վարդգէս Մանուկ* անվան, Վարդավառի տոնախմբության ժամանակ մատաղվող (նախկինում՝ զոհաբերվող) եզան⁶² *Վարդեան* անվան և առասպելաբանական եղջերվաքաղ նշանակող *վարդապա*⁶³ բառի մեջ: **Վարդ* բաղադրիչը պարունակած հատուկ անունների շարքը պետք է դասել նաև Վանանդի՝ սեպագրությամբ ավանդված 'Arda/*Uarda/**Վարդայ* քաղաքանունը⁶⁴:

Ըստ երևութին, Վարդանի կամրջի «տեր» և «բարի ոգի» օձը ըմբռնվել է նաև օձերի թագավոր և, որպես այդպիսին, օձամանուկ: Նա հսկա օձ է, պսպղուն է, շողշողում է: Ս. Աբեղյանը բացատրում է, թե որտեղից է գալիս այդ ըմբռնումը. «Օձերի թագավորը, ինչպես բոլոր վիշապներն (իմա՝ վիշապ օձերը-Ս.Պ., Լ.Պ.) ընդհանրապես, գլխին՝ որպես թագ ունի արեգակնանման մի թանկագին քար կամ ոսկե եղջուրներ, որոնք լույսի պես փայլում են...»⁶⁵: Օձերի թագավորի գլխի «արեգակնանման» թանկագին քարը խորհրդանիշն է Արեգակի, իսկ «լույսի պես փայլող եղջուրները»՝ լուսնեղջուրի/Լուսնի⁶⁶: Այս առթիվ պատահական չէ, որ շիրակյան վերոհիշյալ «Հաբրմանի» հեքիաթի հերոսը *շահմար օձ* էր կոչվում⁶⁷ (պարս. *šāh-mār* «արքա օձ»): Վանանդի օձերի թագավորը այս տեսանկյունից հիշեցնում է հին հնդիկների Ահի-բուդհյային («անդունդի օձ»), որը, ջրածնունդ լինելով հանդերձ, ինչ-ինչ առնչություններ ուներ նաև արևի և լուսնի հետ⁶⁸:

Օձերի թագավորի արևային և լուսնային կապերի առնչությամբ կարելի է հիշել նաև, որ Հայոց թագավորությունը վերականգնած Վաղարշակ արքան «մեհեան շինեալ յԱրմաւիր անդրիս հաստատէ *արեգական* եւ *լուսնի* եւ իւրոց

⁵⁹ Պետրոսյան Ս., Պետրոսյան Օ., Պետրոսյան Լ., «Ջրերի զավակի» պաշտամունքի արտացոլումը սեպագրային մի քանի տեղանուններում, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 1., Գյումրի, 1998, էջ 76-83:

⁶⁰ Պետրոսյան Ս., Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, էջ 252-264:

⁶¹ Ղափանցյան Գ., նշվ. աշխ., էջ 152: Капанцян Г., Историко-лингвистические работы к начальной истории армян, Ер., 1956, стр. 287-288.

⁶² Մալխասյանց Ս., նշվ. աշխ., հ. IV, էջ 310:

⁶³ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. II, էջ 792:

⁶⁴ ՎԿԽ, N 128 A1.

⁶⁵ Աբեղյան Ս., նշվ. աշխ., հ. VII, էջ 65: Լալայան Ե., նշվ. աշխ., հ. II, էջ 171:

⁶⁶ Հմմտ. եղջիր «լուսնեղջուր, լուսնի մահիկ» և եղջերիկ «մի տեսակ օձ» (ՀԱԲ, հ. II, էջ 24):

⁶⁷ «Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. IV, էջ 15, 521:

⁶⁸ Топоров В., Ахи Будхня, МЗФЭ, стр. 75.

նախնեացն»⁶⁹: Իսկ շատ ավելի վաղ Իշպուհնի թագավորը (մ.թ.ա. 825-810թթ.) Բուդինի հավաքածուի ուրարտական բրոնզե թիթեղին (Ժնն) պատկերված լինելով մանուկ Մենուայի և գլխավոր աստվածությունների շրջապատում, գլխավերին իր անունը բացահայտող մեհենագրերից վերև, ունի իր թագավորական կարգավիճակը բացահայտող *արնի* և *լուսնի* զծապատկերները⁷⁰:

О КУЛЬТЕ ЗМЕИ И ЗМЕЕВИДНОГО ЮНЦА В ШИРАКЕ И ВАНАНДЕ

___ Резюме ___

___ С. Петросян, Л. Петросян ___

В недрах общеиндоевропейской мифологии зараждались образы не только индоиранского божества Апам-Напат (“сын вод”) и древнейшего армянского божества *Ахур (“сын воды”), но и древнеиндейского божества Ахи Будхня (“змея глубин”) и армянского огромного водяного доброго змея *Вардан (“водяной”). От теонима *Ахур происходит урбоним урартского периода *Ахуриани* (у совр. Сарыкамьша) и потамоним *Ахуреан* (др. арм. название реки Карс), а от теонима *Вардан происходит микротопоним Вардани камурдж (“мост Вардана”) в городе Карс. Теоним *Вардан* не надо путать с муж. соб. именем *Вардан* у которого совсем другое происхождение. Теоним *Вардан состоит из компонентов *вард<*uadr- (<и.-е. *ued- “вода” и суффикс -го) и суффикса -ан. Для *вард- < uadr- ср. соб. им. Нуард<*Ну-вард, Вардгес, Вардеван, Вардавар, Вардамарг, а также урбоним урартского периода ‘Arda/*Uarda.

Имя сказочного героя-змеевидного юнца, *Havrtmani состоит из компонентов *hambar “амбар, загром” и -mani “змея” (ср. арм. manič) “извив змеи” и означает “змея амбара”, т.е. “змея-охранительница амбара”. Появление такого названия должно быть обусловлено широким распространением в Армении пашенного земледелия и культа змеи. В данном случае имеется в виду тот факт, что предки ширакских армян занимались преимущественно культивированием зерновых, а змеи стали союзниками людей в их борьбе с грызунами – воров зерна.

Տեղեկություններ հեղինակների մասին

Պետրոսյան Մարգիտ Գարեգինի - պ.գ.դ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Մ.Նալբանդյանի անվ. ԳՊՄԻ պատմության և իրավագիտության ամբիոն, Email: Vahe1996@mail.ru

Պետրոսյան Լուսինե Մարգիտի - պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների, Մ.Նալբանդյանի անվ. ԳՊՄԻ պատմության և իրավագիտության ամբիոն, E-mail: Vahe1996@mail.ru

⁶⁹ Խորենացի, Բ, ք:

⁷⁰ Պետրոսյան Մ., *Հայոց մեհենագրության ակունքներում*, Գյումրի, 2008, էջ 35, նկ. 3, էջ 57, նկ. 4: